Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան

Հաշվետվություն

## ՀՀ Արմավիրի մարզի Արտամետ համայնքի ղեկավարի 2014թ. 1-ին կիսամյակի գործունեության վերաբերյալ

Հարգելի Արտամեցիներ, հարգարժան համայնքի ավագանու անդամներ և հյուրեր ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից սահմանված կարգի համաձայն այսօր ես ձեր ուշադրությանն եմ ներկայացնում մեր գյուղապետարանի կողմից 2014 թվականի առաջին կիսամյակում կայացած աշխատանքները ըստ գործունեության բնագավառների

Հաշվետվության ընդգրկված ժամանակաշրջանում՝ 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում գումարվել է համայնքի ավագանու թվով 3 նիստ, որի արդյունքներով կայացվել է 7 որոշում, քննարկվել է ֆինանսական հարցեր:

## Ֆինանսների բնագավառում.

2014 թվականի համայնքի բյուջեի առաջին կիսամյակի եկամտային և ծախսային մասերը:

ՀՀ օրենսդրության սահմանված կարգով 2014 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում տնօրինվել են համայնքի բյուջեի միջոցները և ապահովել դրանց նպատակային օգտագործումը: Օրենքով սահմանված կարգով որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքում կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումներ: 2014 թվականի հուլիսի1-ի դրությամբ պլանով սահմանված՝

Հողի հարկ՝ 10200.0 հ.դ --- 3355.9 հհ.դ 33%

Գույքահարկ՝ 200.0հ.դ --- 197.3 հհ.դ 98 %

Սեփական եկամուտների մուտքերի ապահովման համար իմ կողմից գրավոր թողարկվել է բոլոր մեծ պարտքեր ունեցող հողի սեփականատերերին և վարձակալներին և ժամկետ է սահմանվել որպեսզի մինչև տարեվերջ հավաքագրվի և մուտքագրվի պլանով նախատեսված գումարը:

## Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

Ինչպես ձեզ հայտնի է 2005 թվականից պայմանագրային սկզբունքով «Տեղաս» ՍՊԸ պայմանավորվել էր համայնքում բնական գազի անցկացման աշխատանքներ իրականացնել, որի համար համայնքային բյուջեից 52.0 միլիոն հհ դրամ փոխանցվել է այդ նպատակի համար, բայց աշխատանքները չեն կատարվել:

Գազաֆիկացման աշխատանքները դադարեցվել են: Քրեական գործ է հարուցվել «ՏԵԴԱՍ» ՍՊԸ շինարարական կազմակերպության վրա: Քրեական գործը ընթացքի մեջ է:

Համայնքի հողային հաշվեկշռի համաձայն մեր համայնքում հաշվարկված է 775.15 հեկտար վարելահող, 624.05 հեկտար բազմամյա տնկարկներ:

Գյուղապետարանի կողմից հունիսի 1-ի դրությամբ ցանքատարածությունները ըստ մշակաբույսերի ներկայացվել վիճակագրական ծառայություն:

## Հողօգտագործման բնագավառ.

Հողերի արդյունավետ օգտագործման ու պահպանության խնդիրները լուծելու համար համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացրել հողօգտագործողների, հողի սեփականատերերի կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողություն է սահմանվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառմանը, հողային հաշվեկշռի կազմման, ներտնտեսային հողաշինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ:

## Տրանսպորտի բնագավառ.

Համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներ ու շարժական մեխանիզմները օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու որոշմամբ, 1 տարի ժամկետով, վարձակալության պայմանագրով հանձնվել են «ՏԱԳ-ԳԱՏԷ» ՍՊԸ-ին:

## Աշխատանքի և սոց ծառայության բնագավառ.

Հիշատակված բնագավառում համայնքի ղեկավարը աջակցել է նոր աշխատատեղերի ստեղծմանը, պայմաններ է ստեղծել համայնքի ազգաբնակչության աշխատանքի անցնել «ՏԱԳ-ԳԱՏԷ» ՍՊԸ-ում, գյուղապետարանի աշխատակազմում և դպրոցում:

## Գյուղատնտեսական բնագավառում.

ա) Հունվարի 1-ից մինչև 17-ը համայնքում առկա կենդանիների բառ տեսական հաշվառում և սահմանված ժամկետում հաշվառման վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է վիճակագրական ծառայություն:

Համաձայն այդ հաշվառման պարզվել է, որ համայնքում կա մանր եղջերավոր՝ 2500 գլուխ, խոշոր եղջերավոր անասուններ՝ 444 գլուխ, խոզեր՝ 90, թռչուն՝ 900, որը 2013 թվականի համեմատ աճել է :

բ) Համայնքի ղեկավարը օրենքով իրեն վերապահված պետության կողմից պատվիրակված լիազորության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է իր իրավասությունների սահմաններում կազմակերպվել է առկա անասնագլխաքանակության հիվանդությունների կանխման, ինչպես նաև հակահամաճարակային միջոցառումները և ազգային այլ կանոնների պահպանման աշխատանքները:

գ) Համայնքի ղեկավարի աջակցությամբ 2013 թվականի աշնանը և 2014 թվականի գարնանը Արմավիրի մարզպետարանի և ՀՀ գյուղ. նախարարության օգնությամբ ձեռք բերվեց դիզելային վառելանյութ, պարարտանյութ և այն պայմանագրային կարգով բաժանվեց գյուղացիական տնտեսություններին:

Համայնքի ղեկավարը հաշվետվությամբ ընկած ժամանակահատվածում աջակցություն է ցուցաբերում գյուղացիական տնտեսություն վարող ֆերմերների մարդկային ռեսուրսներով ապահովելու հարցում, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 30 աշխատատեղ և միջին օրական աշխատավարձը կազմել է 6000-7000 ՀՀ դրամ:

Գյուղապետարանի սեփականություն հանդիսացող տեխնիկայով համայնքում կատարվում է աղբահանություն:

## Հիմնախնդիրներ

1. Ներհամայնքային փողոցների կառուցում
2. Ճանապարհների լուսավորություն

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Դավթյան**